

ՇԱՐԱՀԱՅՈՒՍԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՈՏԱԿԱՆ ԱՐԺԵՔՆ ԱՐՑԱԽՅԱՆ ՊՈՆԶԻԱՅՈՒՄ

Գեղարվեստական խոսքում կարելու է հնչյալ բառերի դիպուկ գործածությունը նախադասության մեջ, այնպես էլ շարահյուսական հոմանիշների ճշգրիտ ընտրությունը, դրանց նպատակային կիրառությունը, նախադասության անդամների համաչափ տեղադրումը: Այդ ամենը որոշ յուրահատկություններ են մտցնում նախադասությունների կառուցման ծեփերի մեջ եւ դրանով իսկ արտահայտում գրող անհատի վերաբերմունքն իր նկարագրած իրականության նկատմամբ:

Շարահյուսական հոմանիշներից մեկնումեկին նախապատվություն տալն արդեն իսկ ստանում է ոճական արժեք և բնորոշում հեղինակի նախասիրությունն ու նպատակադրումը: Հոգվածում հենց այս տեսանկյունով համառոտակի քննության կենթարկենք շարահյուսական այն ծեփերն ու արտահայտությունները, որոնք այս կամ այն չափով նպաստում են Արցախի բանաստեղծների խոսքի ոճավորմանը:

Ըստ հայերենի քերականության գործող օրենքի՝ ամեն լրացում դրվում է իր լրացյալից առաջ, բայց քանի որ հայոց լեզվի շարահյուսությունը բավականին ճկուն է, կարելի է բառերը կապակցել ոչ միայն սովորական, այլև շրջուն շարահյուսությամբ: Շրջուն շարահյուսությունն արցախյան պոեզիայում տարածված լեզվաարտահայտչական կարևոր միջոցներից է, որն էլ նպաստում է բանաստեղծների խոսքի պատկերավորությանն ու արտահայտչականությանը, ռիթմին ու հանգավորմանը: Շրջուն շարահյուսությամբ ավելի հաճախ գործածվում են որոշիչը, հատկացուցիչը և ենթական:

Որոշիչի հետադաս գործածությունը սովորականի համեմատությամբ շատ ավելի արտահայտիչ է, որովհետև իր բնական տեղը փոխած որոշիչը հաճախ ավելի մեծ ուշադրություն է գրավում, և գրողն այն գործածում է միտքը շեշտելու նպատակով: Այսպես՝

-Քեզ բյուր փառք, Արցախ, եզերք աննվաճ,

քեզ սեր և պատիվ,

և հավերժություն: (4, 421)

- Հաշվի առնելով հոդվածի ծավալը՝ ընդգրկել ենք մեր կողմից ուսումնասիրված ոչ բոլոր բանաստեղծներին:

Քաղաքներդ
Շեն ու Իքնադ,
Աղբյուրներդ
Զուլա ու Աադ...

Արարիչ են
Յողիդ մարդիկ՝
Յոգով ազնիվ
Ու անառատ: (3, 17)

Առաջին հատվածում աննվաճ որոշիչը, որ հետադաս դիրք ունի, յուրահատուկ շեշտվածության հետևանքով ավելի է ընդգծել Արցախի աննվաճ լինելու փաստը, իսկ երկրորդ օրինակում հետադաս որոշիչները միաժամանակ ընդգծել են Ղարաբաղի և դարաբաղցու ինչպիսիս լինելը, բանաստեղծությանը հաղորդել են երաժշտականություն և նպաստել հանգավորմանը (չքնադ-պաղ):

Ինչպես որոշիչ, այնպես էլ հատկացուցչի շրջադասությունները պայմանավորված են հանգի, երբեմն էլ բանաստեղծական տողերում բառերի համաչափ տեղադրման և այլ ոճական-արտահայտչական նկատառումներով:

Օրինակ՝ Արցախ, դու ես սերը և խորհուրդը ուլսի,

Քո մեջ արարումն է ապրում որպես Աստված,

Դու ծաղկունքի օրրան, դու շյուղերով հուլսի

Փայփայուն ես բույնն ու անդաստանդ փրկված: (5, 25)

Հատկացուցիչները, դրվելով տողերի վերջում, դառնում են հանգաբառեր (ուլսի-հուլսի): Այս հանգամանքով էլ հենց տվյալ մասնավոր դեպքում պայմանավորվում է շրջումը:

Ուսումնասիրելով Արցախի բանաստեղծների ստեղծագործությունները՝ կարող ենք ասել, որ նրանցում անվանական լրացումների շրջուն շարադասությունը, այնուամենայնիվ, կանոնավոր դասավորության համեմատությամբ ունի սակավ կիրառություն: Ամիրաժեշտ ենք համարում նշել նաև, որ պատմական թեմայով գրված ստեղծագործություններում, առանձնապես պոեմներում, հետադասումը առավել մեծ չափերի է հասնում:

Կանոնավոր ու շրջուն շարադասության հարաբերակցության ու հաճախականության մասին ավելի ստույգ պատկերացում կազմելու համար մենք զուգահեռ անցկացրինք մեր կողմից ուսումնասիրվող բանաստեղծներից Վ.Հակոբյանի և Ս. Խանյանի բանաստեղծությունների ու պոեմների միջև՝ յուրաքանչյուրից վերցնելով հավասար քանակությամբ բանատող: Վ. Հակոբյանի «Արցախա ծուխ», «Մեսրոպ Մաշտոցն Ամարասում» և Ս. Խանյանի «Արցախյան դողանջներ», «Արցախի արծիվը» ժողովածուների առաջին իսկ էջերից սկսած՝ հաշվեցինք 1200-ական տող և քարտագրեցինք բոլոր որոշիչներն ու հատկացուցիչները անկախ դրանց ոճական արժեքից: Ստացվեց հետևյալ պատկերը

Ֆեդինակ	Որոշիչ		Հատկացուցիչ	
	Կայուն	շրջուն	Կայուն	շրջուն
Վ.Յ. «Արցախյան ծուխ»	286	77	312	63
Վ.Յ. «Մեսրոպ Մաշտոցն Սմարասուն»	309	262	267	183
Ս.Խ. «Արցախյան դողանքներ»	281	98	419	54
Ս.Խ. «Արցախի արծիվը»	283	121	258	94

Ինչպես երևում է վիճակագրական տվյալներից, պատմական թեմայով գրված պոեմներում («Մեսրոպ Մաշտոցն Սմարասուն», «Արցախի արծիվը»), ի տարբերություն բանաստեղծությունների, անվանական լրացումների շրջուն չարադասությունը համեմատաբար գերակշռում է: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ նրանցում շրջունը խոսքի մեղեդայնության ու բանաստեղծականության խնդրի լուծումից բացի ունի նաև այլ միտվածություն: Այն նպաստում է ստեղծելու գրաբարի պատրանք, զգալ տալու պատմական ժամանակաշրջանի հեռավորությունը:

Ինչպես հայտնի է, ժամանակակից գրական հայերենում ենթական սովորաբար ունի նախադաս գործածություն, բայց հաճախ այն գործածվում է հետադաս: Հետաքրքիր են առանձնապես այն դեպքերը, երբ զուգակցվում են ենթականի և ստորոգյալի կանոնավոր ու շրջուն չարադասությունները: Դրանով խոսքը հիմնականում օժտվում է քնարական արտահայտչականությամբ, բանաստեղծականությամբ: Այսպես՝

Երգիս տոոեոո քեզնից են օաւիս.
Ու դեպի քեզ են թնում տոոեոս.
Սիրուս շոոեոո քեզնից են օաւիս.
Ու դեպի քեզ են հեւում շոոեոս:

Իմ կաոոտնեոո քեզնից են օաւիս.
Ու քեզ են շոոււմ իմ կաոոտնեոո.
Երգ-նարոտներս քեզնից են աոնում,
Ու քեզ են տալիս երգ-նարոտներս: (2, 180)

Խոսքային հյուսվածքի մեջ ռիթմական բազմազանություն մտցնելու նպատակով բանաստեղծները ոչ հաճախակի, բայց դիմում են նաև օժանդակ բայերի ու կապակցական բառերի շրջուն չարադասության:

Լեզվական յուրաքանչյուր միավոր իր ուրույն տեղն ունի լեզվի կառուցվածքում և յուրահատուկ դեր է կատարում նրա հաղորդակցական գործառության մեջ: Այս առումով թե՛ լեզվական հաղորդակցային և թե՛ ոճական տեսակետից նախադասությունն առանձնահատուկ ու շատ կարևոր միավոր է: Նրանում են տեղ գտնում չարահյուսությանն ստորադասված մակարդակի միավորները:

«Նախադասությունների մեջ ոչ միայն արտահայտվում են չափածոյի գեղարվեստական առանձնատկություններով պայմանավորված որոշ իրողություններ, այլև գրող անհատի վերաբերմունքն իր նկարագրած իրակա-

նության նկատմամբ, որով էլ պայմանավորված են նախադասության տարբեր տեսակների գործածությունները տվյալ գրողի ստեղծագործություններում»¹:

Բանաստեղծը կարող է որոշ յուրահատկություններ մտցնել նախադասությունների կառուցման սովորական ձևի մեջ, քանի որ այդտեղ նա գործ ունի արտաբերման ելևէջների, նախադասության անդամների համաչափ տեղադրման և հանգավորման հետ:

Արցախի բանաստեղծներն իրենց չափածո ստեղծագործություններում գործածում են շատ բազմազան կառուցվածքի նախադասություններ: Նրանք կարողանում են նկարագրվող դեպքերի և երևույթների զանազանությամբ ընտրել նախադասությունների համապատասխան կառուցվածք:

Մեր կողմից ուսումնասիրվող բանաստեղծների լեզվի քննությունը ցույց է տալիս, որ ավագ սերնդի բանաստեղծների հեղինակային խոսքը հիմնականում աչքի է ընկնում պարզ, իսկ երիտասարդ բանաստեղծների խոսքը՝ բարդ նախադասությունների գործածությամբ: Վ. Հակոբյանի ստեղծագործություններում հավասարապես հանդիպում են և՛ պարզ, և՛ բարդ նախադասություններ: Ավագ սերնդի բանաստեղծները, ճիշտ գնահատելով ժողովրդական խոսքի շարահյուսական կառուցվածքի առանձնահատկությունները, հերոսներին խոսեցնում են առավել պարզ նախադասություններով, շաղկապների նվազագույն գործածությամբ: Հաճախ, կարծես թե նրանք պարզապես զրուցում են ընթերցողի հետ և այդ պատճառով ավելի շատ գործածում են պարզ կամ քիչ բառերից կազմված նախադասություններ: Օրինակ՝

Պոկվեց արծաթ
Չնագույն մի թել,
Ընկավ իմ ուսին...
Ընկավ աննկատ,
Թեթև ու հանդարտ՝
Ոնց շողը լույսի: (1, 45)

Դու հունդ ես, հող ես, Հաց ես սեղանի, Կյանք ես, արև ես, Շունչ՝ սպեղանի:	Դու խենթ Թաթառ ես, Բամբիռ ես, թառ ես, Երգ ես, բարբառ ես, Մաշտոցյան տառ ես: (3, 33)
---	---

Այս տողերը կազմված են խոսքի բովանդակությունը պարզ ու հասկանալի ներկայացնող բառերով ու կառույցներով: Նրանցում նկարագրվում են շարժուն, փոփոխական պատկերներ: Խոսքը սեղմ դարձնելու նպատակով բաց

¹ Ա. Սարուբյան, Ե. Չարենցի լեզուն եւ ոճը, Եր., 1979, էջ 185:

են թողնված շաղկապներ և նախադասության որոշ անդամներ: Դրանով ավելի են ընդգծվել նախադասությունների իմաստները:

Նույն հեղինակի նույն ստեղծագործության մեջ հաճախ հանդիպում ենք տարբեր բնույթի ու կառուցվածքի նախադասությունների զուգահեռ գործածությունների: Այնպես որ, երբ խոսում ենք դրանցից մեկի կամ մյուսի մասին, նկատի ունենք այդ տեսակետից մեկի գերակշռությունը այս կամ այն հեղինակի մոտ կամ այս կամ այն ստեղծագործության մեջ:

Արցախյան պետգիայում լայն կիրառություն ունեն բարդ նախադասությունների տարբեր տեսակները:

Ինչպես գիտենք, բարդ նախադասության բաղադրիչները կարող են կապակցվել շաղկապներով (ստորադասական նախադասությունները նաև հարաբերականներով) կամ շարահարությամբ:

Բացառությամբ միավորական, համաժամանակության և ժամանակային հաջորդականության հարաբերությունները արտահայտող թվարկման բնույթի բազմանդամ բարդ համադասական նախադասությունների, որոնք ինչպես գրական, այնպես էլ ժողովրդախոսակցական լեզվում սովորաբար կապակցվում են շարահարությամբ, մյուս կառուցվածքի բարդ համադասական և ստորադասական նախադասությունների ճնշող մասը գրական հայերենում ավելի հակված է դեպի շաղկապական կապակցությունը, իսկ ժողովրդախոսակցական լեզվում՝ դեպի շարահարական կապակցությունը:

Հենց այստեղից էլ կապակցության շարահարական եղանակը հետզհետև թափանցում է գեղարվեստական բնույթի երկերի մեջ՝ դառնալով գրական լեզվի ժողովրդայնացման կարևոր ազդակներից մեկը: Եվ պետք է ասել, որ շարահարական բարդ նախադասություններն ամենից ավելի հաճախված են այն գրողների ստեղծագործություններում, որոնց ստեղծագործությունները հոգևոր սնունդ են ստանում հարազատ ժողովրդի կենդանի խոսքի ակունքներից:

Այս տեսակետից արցախյան բանաստեղծների լեզուն հատկանշվում է շարահարական կապակցության բազմազան ձևերի հմուտ գործառությամբ: Նրանց խոսքին ժողովրդայնության երանգ են տալիս ինչպես անկախ, այնպես էլ կախյալ շարահարությամբ բարդ նախադասությունները: Ընդհանրապես կախման անհամարժեքության հարաբերություններ արտահայտող շարահարությունները հայերենի լեզվամտածողության ամենահարազատ տարրերից են և ներկայացնում են մեր շարահյուսական համակարգը պայմանավորող կառուցվածքների ժողովրդական երանգները:

Որպեսզի գրողը կարողանա մտքերի ու նախադասությունների ստորադասական հարաբերություններ ստեղծել առանց խոսքը ժանրաբեռնող լրացուցիչ սպասարկու բառերի՝ շաղկապների և հարաբերական դերանունների, և դրա հետ միասին արտահայտի շաղկապական կառուցվածքներին համարժեք նշանակություններ, պետք է ոչ միայն քաջատեղյակ լինի շարահյուսական կարգերին ու իրակություններին, այլև ունակ լինի նկատելու ու բացահայտելու թաքնված հնարավորությունները, պետք է ունենա լեզվական մուրբ ու ներհուն զգացողություն, խոր ներըմբռնողություն: Այս դեպքում միայն, ժողովրդական ձևերն ու կառուցվածքները փոխադրելով գրական երկի մեջ, կարտահայտի լեզվի ճշգրիտ ու կանոնավոր ձևերին համարժեք իմաստային ու քերականական հարաբերություններ՝ միաժամանակ պահելով կենդանի խոսքի անմիջականությունը:

Կախյալ շարահարությամբ նախադասությունների բազմազան կառուցվածքները հատուկ հմայք ու շունչ են տալիս Արցախի բանաստեղծների խոսքին: Օրինակ՝

Փոխեցի՞ր լեզուդ՝ արյունն է փոխվում,
Քո երակների արյունը որդան,
Երբ հայերեն չէ քո սիրտը խփում,
Փվվում է սյունը հայրենական տան: (4, 357)

Այսպես՝ բերված օրինակներից առաջինում կախյալ նախադասությունները խնդրային են (ուղիղ խնդիր), երկրորդում՝ պարագայական (պայմանի պարագա): Շարահյուսության ոճական առանձնահատկություններից մեկն այն է, որ նման կապակցությունը միտքը դրսևորում է ոչ միայն ավելի ամփոփ ու սեղմ ձևերի մեջ, այլև երբեմն ի հայտ է բերում նաև իմաստային որոշ նրբերանգներ, որոնք չունեն կամ չեն կարող մույն պատկերավորությամբ արտահայտել համապատասխան շաղկապական զուգահեռները: Դա բավականին ցայտուն երևում է վերը բերված օրինակներից: Վերջին հատվածում կախյալ նախադասությունը շարահարության շնորհիվ ստացել է հարցական հնչերանգ և դրսևորում է մի տեսակ անուղղակի ճարտասանական հարցում՝ «Փոխեցի՞ր լեզուդ», որը, սակայն, պատասխան չի պահանջում: Վերջինս ներունակությամբ ըմբռնվում է իբրև պայման մեկ այլ գործողության, որը հենց արտահայտված է գլխավոր նախադասության մեջ, իբրև հիշյալ պայմանի հետևանք՝ արյունն է փոխվում: Բացի դրանից, եթե պայմանի կախյալ նախասադասությունը լիներ շաղկապական, ճարտասանական ոճը պիտի փոխվեր պատմողականի (հմտ. «Եթե փոխեցիր լեզուդ, ապա արյունն է փոխվում»), որը տվյալ դեպքում կթուլացներ հուզականությունն ու ներգոծման

ուժը: Նման կառուցվածքի նախադասությունը դժվար թե կարողանա ստանալ հարցական հնչերանգ:

Արցախի բանաստեղծների ստեղծագործություններում հանդիպում են նաև բազմաբարդ նախադասություններ: Դրանց գործածությամբ առանձնանում է հատկապես Վ. Հակոբյանի պոեզիան, որի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ինչքան էլ մտքերը ծավալվում են, նախադասությունները որքան էլ հարստանում են նոր անդամներով, կախյալ կամ անկախ միավորներով, թվարկումներով ու հեղինակային ընդմիջումներով, միևնույն է, երբեք չի խախտվում ամբողջությունը և կառուցվածքային համաչափությունը, ինչն արտահայտվում է մասերի շարահյուսորեն ճշգրիտ և կարելի է ասել՝ տվյալ դեպքի համար առավել ընդունելի տրոհումներով: Օրինակ՝

Ծառը, որ անճիգ ելնում է ահա
քո կանաչ ափից,
իմ երազներին ու քո ծեռքերին
ուղիղ զուգահեռ,
քո աղբյուրների անմահությունն է
և արծառնի է անպայման երգի,
քանզի ոգի կա սլացքում նրա,
քո ոգին պայծառ՝

Փրկիչն ամենայն: (4, 273)

Հատվածը մի ամբողջական նախադասություն է բազմաբարդ կառուցվածքով, խիստ բազմատարր ու բազմազան: Այստեղ բառերի ու զուգորդությունների ներդաշնակ շարադասությամբ ստեղծվել են բանաստեղծության այնպիսի տողանցումներ, որոնք, յուրովի տրոհելով խոսքը, պահպանում են բարձրագույն ռիթմական միությունը, որ առաջ է գալիս մտքի որոշակի դադարով: Հենց այդ դադարներն են, որ անհրաժեշտ պարզություն են մտցնում կառույցի մեջ՝ նուրբ քնարականությամբ պարուրելով այն:

Մտքի համառոտության ու սեղմության հասնելու նպատակով բանաստեղծներն իրենց ստեղծագործություններում գործածում են թերի նախադասություններ: Ձեռնման քերականական իրողությունը ևս ծառայում է իբրև խոսքի ոճավորման որոշակի լեզվական հնարանք: Ձեռնման ենթարկվում են ինչպես գլխավոր, այնպես էլ երկրորդական անդամները: Ստորոգյալը կարող է զեղչվել լրիվ կամ մասնակիորեն: Առանձին հետաքրքրություն են ներկայացնում հատկապես այն դեպքերը, երբ զեղչված է լինում բաղադրյալ ստորոգյալի հանգույցը կամ պարզ ստորոգյալը, իսկ նրանց լրացումները մնում են: Օրինակ՝

Հորս ճակատին՝ քարափի կնճիռ,
աչքերում՝ հաստատ վճիռ կայծակի... (5, 46)

Նկատելի է, որ զեղչված է կա և նման իմաստով որևէ ստորոգյալ, սակայն առկա է ստորոգյալի լրացումը՝ տեղի պարագան (ծակատին, աչքերում), և նախադասությունը հնչերանգային ավարտվածությամբ ստանում է ավարտունություն: Երբեմն այսպես շարադրվում են ամբողջական հատվածներ ու պարբերությոներ, որոնք դառնում են ոճ ու գրելածև: Ահա Ս.Խանյանի «Կանչերս» բանաստեղծությունը, որն ամբողջովին կառուցված է այս հիմունքով. բաց են թողնած բոլոր նախադասությունների հանգույցները:

Իմ երազները՝ լեռների ծնունդ,	Իմ արմատները լեռների գրկում,
Լեռների սնունդ՝ իմ երազները,	Լեռների սրտում իմ արմատները,
Իմ մուրազները՝ լեռների հոգի,	Իմ նուրբ մատները՝ մի-մի ճառագայթ,
Լեռների ոգի՝ իմ մուրազները,	Լեռները շոյող՝ իմ լույս մատները:(2,180)

Դժվար է պատկերացնել մտքի արտահայտման ավելի դիպուկ ձևեր, քան այստեղ: Չկա ավելորդ մի շեշտ կամ հնչյուն, մի բառ կամ մի կետ: Լեզվական- քերականական, թվում է թե, ամենապարզ ձևերի մեջ բանաստեղծն առաջ է քաշում իր և լեռների ներդաշնակության խորհուրդը:

Հայտնի է, որ նախադասության անդամի զեղչման հիմքը նրա հասկանալի լինելն է խոսքի կառուցվածքից, մի այլ առիթով հիշատակված լինելուց կամ խոսելու պայմաններից: Հեղինակը զեղչման դիմում է տարբեր նկատառումներով՝ իր խոսքը ոճավորելու, պարզ ու արտահայտիչ դարձնելու նպատակով: Քանի որ միայն սովորական զեղչումներ չեն Արցախի բանաստեղծների ստեղծագործություններում, այլ միանգամից բաց են թողնված մի քանի անդամներ, ուստի դա նրանց խոսքը ինքնատիպ ու խոսուն դարձնելու միջոց է: Ինչքան շարժուն ու ռիթմիկ լինի խոսքը, մի տողից արագ անցում կատարվի մյուսին, այնքան տպավորիչ կլինի հեղինակի ասելիքը:

Այսպիսով՝ Արցախի բանաստեղծները շարահյուսական անհրաժեշտ միջոցների ընտրությամբ ու դիպուկ գործածությամբ իրենց լեզուն դարձնում են ավելի արտահայտիչ, պատկերավոր ու ներգործուն:

Գրականություն

1. Ա.Սարոբյան, Ե. Չարենցի լեզուն և ոճը, Եր., 1979:
2. Ա. Պապոյան, Պ. Սեւակի Չափածոյի լեզվական արվեստը, Եր., 1970:
3. Գ. Մելքոնյան, Ավ. Իսահակյանի զեղարվեստական արձակի լեզուն եւ ոճը, Եր., 1990:
4. Шенгели Г., Техника стиха, М., 1960.

Սկզբնաղբյուրներ

1. Գ. Գաբրիելյան, Աղավնատուն, Բ., «Յազըչի», 1987:
2. Ս. Խանյան, Արցախյան դոդանջներ, Երևանի պետ. համալսարան, 1991:
3. Հր. Բեգլարյան, Հրաշք երկիր իմ Ղարաբաղ, Երևան «Նաիրի» հրատ., 1989:
4. Վ. Դակոբյան, Մենարան, Երևանի պետ. համալսարան, 1996:
5. Ռ. Եսայան, Ծարաված հետքեր, Ստեփ., «Մաշտոց» հրատ., 1991: